

կարգաց շՄՇ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքել-
յանը: Նա հանգամանորեն բնութագրեց հանրա-
պետության արդյունաբերական զարգացման
պատմական փուլերը, ինչպես նաև Հայաստա-
նում հզոր արդյունաբերության և բարձր զար-
գացած գյուղատնտեսության ստեղծման հետ
կապված հարցերը: Զեկուցողը նշեց, որ միայն
մեկ տարվա կապիտալ ներդրումների ծախսն
այժմ գերազանցում է սովետական իշխանու-
թյան առաջին 25 տարիների ընթացքում այդ
նպատակին հատկացված գումարները:

Քեև Հայկական ՄՍՀ-ն բռնում է միութենական
տերիտորիայի 0,1 տոկոսից քիչ ավելին և նրա
բնակչությունը կազմում է ՄՍՀՄ բնակչության
1 տոկոսից պակաս, այնուամենայնիվ հանրա-
պետությունում թողարկվող արդյունաբերական
արտադրանքի 15 տեսակների տեսակարար կշի-
ռը կազմում է այդ ապրանքների միութենական
արտադրության 5—35 տոկոսը: Գրանց թվում
են այնպիսի կարևոր արտադրատեսակներ, ինչ-
պես քիմիական և լեռնահանքային արդյունա-
բերության արտադրանքը, շարժական էլեկտրա-
կայանները, ուժային տրանսֆորմատորները,
մետաղահատ հաստոցները և այլն:

«Հոկտեմբերը և գիտության զարգացումը Հա-
յաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայ-

կական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի պրե-
զիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:
Նա նշեց հասարակության հեղափոխական վե-
րափոխման և մեր երկրում գիտության աննա-
խընթաց զարգացման միջև գոյություն ունեցող
անմիջական կապը: Միայն այնպիսի հասարա-
կության մեջ, — ասաց Վ. Համբարձումյանը, —
որը ձգտում է ժողովրդի ողջ կյանքը զննել գի-
տական հիմքերի վրա, գիտությունը կարող է
ստանալ բոլոր անհրաժեշտ պայմաններն իր
զարգացման համար:

Զեկուցողն ըստ փուլերի նկարագրեց գիտու-
թյան զարգացումը Սովետական Հայաստանում,
որի կարևոր իրադարձություններից է Հայկական
ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը
1943 թ.: Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը
կանգ առավ գիտության առանձին բնագավառ-
ների զարգացման վրա և նշեց այն խնդիրները,
որոնք ներկայումս դրված են հանրապետության
գիտնականների առաջ:

Վերլուծ ժողովի մասնակիցները մեծ ոգևո-
րությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված
ՍՄԿԿ ԿԿ-ին, ՄՍՀՄ Գերագույն սովետի նախա-
զահույթյանը և ՄՍՀՄ Մինիստրների սովետին:

Վ. ԽԱԶԱՆՏՐՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Երևանի պետական համալսարանի նախաձեռ-
նությամբ, Հոկտեմբերի 50-ամյակի նախօրյա-
կին մեր հանրապետության մայրաքաղաքում
տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբե-
յանի համալսարանների միացյալ գիտական
նստաշրջանը: Նստաշրջանի երեք օր տևող աշ-
խատանքներին (հոկտեմբերի 4—6-ը) մասնակ-
ցեցին համալսարանի ուսանողության և պրոֆե-
սորա-դասախոսական կազմի ներկայացուցիչ-
ները, ինչպես նաև եղբայրական հանրապետու-
թյուններից ժամանած մեծաթիվ հյուրեր:

Ըր րացման խոսքում Երևանի համալսարանի
ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը
ասաց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը դը-
րեց մարդկության պատմության նոր դարաշրջ-
անի սկիզբը, րացեց կապիտալիզմից սոցիա-
լիզմին անցնելու դարաշրջանը, սոցիալիստա-
կան հասարակարգի հաստատման ու հաղթա-
նակի դարաշրջանը: Նա նշեց, որ մեր կյանքի
կեսդարյա հերոսական ժամանակաշրջանում Սո-
վետական Միությունում իրականացվեց քաղա-
քական, տնտեսական և մշակութային կյանքի ան-

նախադեպ վերելք. ծնվեցին ինտերնացիոնալիս-
տական ոգով դաստիարակված սերունդներ, ո-
րոնց շարքերից էլ աճեցին գիտության և մշա-
կույթի ականավոր շատ գործիչներ: Ակադեմի-
կոս Մ. Ներսիսյանը իր խոսքի վերջում շեշտեց
որ մեր կյանքի այդ մեծ վերածննդի արտահայ-
տություններից մեկն էլ եղբայրական համալ-
սարանների սույն գիտական նստաշրջանն է:

ՀԿԿ Կենտկոմի անունից ողջունելով նստաշրջ-
անի մասնակիցներին, Կենտկոմի քարտուղար
Լ. Խաչատրյանը նշեց, որ Հոկտեմբերյան հե-
ղափոխության ամենացայտուն նվաճումներից
մեկը մեր երկրի բոլոր ժողովուրդների և, մաս-
նավորապես, անդրկովկասյան ժողովուրդների
բարեկամությունն է: Նա նստաշրջանը բնութա-
գրեց որպես Վրաստանի, Հայաստանի և Ադրբե-
յանի միջև գոյություն ունեցող սերտ կապերի
ու համագործակցության ջերմ դրսևորումներից
մեկը: Մեծ նշանակություն ունի գիտնականների
մշակույթի և արվեստի գործիչների աշխատանք-
ների կոորդինացումը:

Նստաշրջանի մասնակիցներին չերմորեն ողջունեցին Քրիլիսիի համալսարանի ուսուցիչները Բ. Վերուան և Աղբրբջանի պետական համալսարանի ուսուցիչ Մ. Ալիևը:

Նստաշրջանի հիմնադիր նիստում լսվեց երեք զեկուցում: «Հոկտեմբերյան ռոպրիստական մեծ հեղափոխությունը և նրա միջազգային նշանակությունը» զեկուցման մեջ ՀՍՍՀ ԿԱ թղթակից-անդամ Մ. Աղայանն ասաց, որ պատմությունը հարուստ է նշանավոր շատ իրադարձություններով, բայց աշխարհի բոլոր ժողովուրդների նկատմամբ վրա գործած մեծ նշանակություն ունեցող հեղափոխությունն իր նմանը չունի: Այսօր ևս մարդկության հասարակական ու քաղաքական կյանքի ամբողջ ընթացքը կրում է մեծ հոկտեմբերի կնիքը: Մարքսիզմ-լենինիզմի կենսական ուժի առավել վառ ու համոզիչ ապացույցն այն է, որ աշխարհի տարրեր մայրցամաքների նորանոր երկրներում են սոցիալիզմի ու դեմոկրատիզմի ուղին: Սոցիալիզմը բուն կերպով մտնում է բոլոր ժողովուրդների կյանքը, որպես կենսական անհրաժեշտություն:

Քրիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր Ա. Սարգսյանն «Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում» զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծեց Աղբրբջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության հաստատման և լենինյան գաղափարների հաղթանակի համար Անդրկովկասի աշխատավորական զանգվածների մղած համատեղ հեղափոխական պայքարի պատմությունը:

Անդրկովկասի ժողովուրդների լենինյան եղբայրական բարեկամությանն էր նվիրված Աղբրբջանի պետական համալսարանի պրոֆ. Մ. Կազիևի զեկուցումը: Հայերի, վրացիների ու աղբրբջանացիների բազմադարյան պատմությունը լի է տնտեսական, մշակութային սերտ կապերի ու ռազմական դաշինքի փաստերով: Սակայն այդ ավանդականին միանգամայն նոր բովանդակություն հաղորդեցին Հոկտեմբերը և լենինյան ազգային քաղաքականությունը:

Նստաշրջանի ճյուղային բաժանմունքներում լսվեցին երկու տասնյակի հասնող զեկուցումներ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության և հասարակական գիտությունների գծով:

Հասարակական գիտությունների բաժանմունքում լսվեցին երեք զեկուցում՝ նվիրված լեզվաբանության և բանասիրության զարգացմանը Վրաստանում, Հայաստանում և Աղբրբջանում, իսկ շորթորդը՝ մեր հանրապետությունում փիլիսոփայության մտքի զարգացման բնագավառում Թրևանի համալսարանի ունեցած դերին:

«Լեզվաբանական գիտությունների զարգացումը Վրաստանում սովետական իշխանության տարիներին» զեկուցման մեջ Քրիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր Շ. Զիժիգուրին հանգամանորեն խոսեց այն նվաճումների մասին, որ ձեռք է բերել լեզվաբանական գիտությունը Վրաստանում 1918 թ. հետո:

Պրոֆեսոր Միր Զալալ Փաշաևը իր զեկուցման մեջ վեր հանեց աղբրբջանական համալսարանի գերը աղբրբջանական բանասիրության զարգացման գործում:

ՀՍՍՀ ԿԱ թղթակից-անդամ է. Աղայանը նրատաշրջանում հանդես եկավ «Լեզվաբանությունը Սովետական Հայաստանում» հանրագումարային զեկուցմամբ: Նա ցույց տվեց ինչպես ողջ սովետական լեզվաբանության բուն զարգացումը, այնպես էլ հայ լեզվաբանության նվաճումները:

Պրոֆ. Հ. Կարրիելյանը իր զեկուցումով ներկայացրեց Երևանի համալսարանի փիլիսոփայական ամբիոնի կատարած գերը Սովետական Հայաստանում փիլիսոփայական մտքի զարգացման գործում:

Բնական գիտությունների տարրեր բնագավառներում երեք հանրապետություններում կայացած նվաճումները հանրագումարի բերվեցին այդ գիտությունների գծով գումարված նիստերում:

Ակադեմիկոս Ա. Շահինյանի, Քրիլիսիի համալսարանի պրոֆեսոր Բ. Խվեղելիձեի և Աղբրբջանի ԿԱ թղթակից-անդամ Մ. Զաֆարովի զեկուցումները նվիրված էին մաթեմատիկայի շրջանագավառում ձեռք բերված նվաճումներին:

Ֆիզիկական գիտությունների բաժանմունքում իրենց կարգացած զեկուցումներում վրացական ակադեմիայի ակադ. Վ. Մամասախիսովը, աղբրբջանական համալսարանի պրոֆ. Ա. Մուխտարովը, ՀՍՍՀ ԿԱ թղթակից-անդամ Մ. Տեր-Միքայելյանը և ֆիզիկա-մաթեմատիկական գիտ. թեկնածու Լ. Միրզոյանը խոսեցին ֆիզիկայի զանազան ճյուղերի ասպարեզում կատարված հետազոտությունների արժեքավոր արդյունքների մասին:

Սղբայրական հանրապետություններում քիմիական գիտությունների զարգացման և այդ ասպարեզում ձեռք բերված նվաճումների մասին խոսեցին պրոֆ. Գ. Զուլֆուլզարիև, ՀՍՍՀ ԿԱ թղթակից-անդամ Ա. Բարայանը և պրոֆ. Վ. Մուկաչվիլին: Պրոֆ. Ս. Սուլեյմանովը, ակադ. Հ. Մաղաբյանը, պրոֆ. Ն. Սիխիրտլաձեն ներկայացրին երկրաբանական գիտությունների բնագավառում երեք հանրապետություններում ունեցած նվաճումները: Սովետական իշխանություն տարիներին կենսաբանական գիտությունների բնագավառում անդրկովկասյան հանրապետություններում ձեռք բերված արդյունքների մասին հաղորդեցին Հ. Բատիկյանը, պրոֆ. Ն. Զիժիգուրին:

լին և պրոֆ. Մ. Ախունդովը, նստաշրջանի նգրափակիչ նիստում՝ հոկտեմբերի 6-ին, լավեյին պրոֆ. Կ. Սուլթանովի, պրոֆ. Մ. Միրիսնսչվիլու, Երևանի պետական համալսարանի պրոֆ. Կ. Խաչատրյանի ղեկուցումները՝ նվիրված անդրկովկասյան համալսարաններում կադրերի պատրաստման ու դիտահետազոտական աշխատանքների կազմակերպման դրվածքին և այդ խնդիրների հետ կապված հեռանկարներին:

Նստաշրջանի աշխատանքներն ամփոփելով, Աղրբեջանի համալսարանի ռեկտոր Մ. Ալևին ասաց, որ ի մի բերելով եղբայրական հանրապետություններում կատարված դիտական աշխատանքները, նստաշրջանը միաժամանակ դարձավ հորելյանական տարվա լավագույն միջոցառումներից մեկը Անդրկովկասում՝ կրկին հավաստելով հարևան երեք ժողովուրդների ինտերնացիոնալիստական անխղճի դաշինքն ու փոխդարձ բարեկամություն:

Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՇՆՁՅՈՒՆԱՐԱՆԱԿԱՆ VI ԿՈՆԳՐԵՍԸ

Սեպտեմբերի 6—13-ը Պրագայում տեղի ունեցավ հնչյունաբանների միջազգային VI կոնգրեսը, որը նախորդ կոնգրեսների հետ համեմատած ամենամեծն էր ինչպես մասնակիցների քանակով, այնպես էլ մասնակցող երկրների ընդգրկումով: Մասնակցող 51 երկրներից ներկայացված էր մոտ 700 ղեկուցում, որոնցից միայն Սովետական Միությունից՝ 82 ղեկուցում, ԱՄՆ-ից՝ 82, Զեխոսլովակիայից՝ 129, Անգլիայից՝ 46, Երանսիայից՝ 36:

Պրոֆ. Ավանեսովի ղեկավարած սովետական ղեկիցացիան բաղկացած էր 39 հոգուց և ներկայացնում էր Մոսկվայի, Լենինգրադի, Նսվոսիրիբսկի, մերձբալթյան հանրապետությունների, Հայաստանի, Վրաստանի, Մոլդավիայի և Ուզբեկստանի գիտական այն կենտրոնները, որոնք զբաղվում են խոսքի ուսումնասիրության հարցերով:

Կոնգրեսի հիմնական թեման էր՝ ափսոսանքահան ազգանշանը և նրա ընկալումը: Ասկայն ներկայացված ղեկուցումներից միայն 69 էին նվիրված կոնգրեսի հիմնական թեմային:

Հաշվի առնելով խոսքի ուսումնասիրության բազմակողմանիությունը, կոնգրեսի ծրագրերը բաժանված էր հետևյալ 4 հիմնական թեմաների՝ խոսքի ֆիզիոլոգիան և պաթոլոգիան, ֆիզիկական ազդակը և ընկալումը, հնչույթաբանություն և լեզվաբանական հնչյունաբանություն, կենսաֆոնետիկա:

Բոլոր ղեկուցումները համապատասխանորեն բաշխված էին տարրեր սեկցիաների, որոնք հիմնականում արտացոլում էին վերոհիշյալ թեմաները:

Պլենար նիստերում լավեցին Դելլատրի (Ճերանսիա) «Ափսոսանքահանից զեպի տարրերակիչ հատկանիշները», Ֆանտի (Եվեզիա) «Հընչյուն, հնչյունի հատկանիշը և ընկալումը», Մ. Հալլեի (ԱՄՆ) «Սերոզ հնչույթաբանություն»:

Լ. Զիտովիչի «Որոշող կանոնների ուսումնասիրության մեթոդը խոսքի ընկալման ժամանակ» և Ունյեհոյերի (ԳՅՀ) «Նումունիկատիվ և արտահումունիկատիվ մտեցումը հնչյունաբանության մեջ» ղեկուցումները: Ամենից մեծ հետաքրքրություն էր ներկայացնում պրոֆ. Գ. Ֆանտի վերոհիշյալ ղեկուցումը, որտեղ հեղինակը իր առջև դրել էր հնչյունների արտասանական յուրահատկությունների և նրանց ֆիզիկական հատկանիշների հարաբերակցությունը պարզելու խնդիրը:

Ղեկուցողը լեզուն և խոսքը բաժանում է հետևյալ մակարդակների, լեզու՝ վերլուծություն, հընչույթ, հնչույթի հատկանիշ և խոսք՝ արտաբերում, խոսքի աչիք, ընկալում: Այս մակարդակները իրար զուգահեռ և համարժեք չեն, բայց կարևորը այն է, որ ըստ Ֆանտի՝ Ռ. Ֆակորսոնի առաջարկած հնչույթների բաժանումը տարրերակիչ հատկանիշների հաշվի հաշվի չի առնում ափսոսանքահան ազգանշանը և նույնիսկ հակասում է նրան: Այսպես, որինակ՝ ըստ Ռ. Ֆակորսոնի մի ընդհանուր կոմպակտ զասում միանում են այնպիսի հնչյուններ, ինչպիսիք են [a] և [k] կամ [p], [l] և [i], [u] հնչյունները, միևնույն ափսոսանքային և ընկալման տեսակետից նրանք ամենահեռու հնչյուններն են, իսկ [i] և [y] հնչյունները, որոնց միջև ափսոսանքահան տարրերությունները ամենանվազն են, համարվում են ամենից ավելի հակադիր: Այստեղից պրոֆ. Ֆանտը հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է տարրերել երկու տիպի հատկանիշներ՝ լեզվաբանական և ափսոսանքահան:

Որպես խոսքի աչիքի ուսումնասիրության հիմնական մեթոդ նա ընտրում է վերլուծությունը համազրության միջոցով: Սինթեզատորը (համադրիչ) մեծ հաջողությամբ ցուցադրվեց կոնգրեսի մասնակիցներին հետևյալ սրբ: Ի տարրերություն նախորդ սինթեզատորների, այս վեց-